ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմիի 1

№ 1377-Ա « 09 » ապրիլի 2024 թ.

ՇՈՐԲՈՒԼԱՂ 1-ԻՆ ՓՈՂՈՑ (ԷՐԵԲՈՒՆԻ, ՄՈՒՇԱԿԱՆ 1-ԻՆ ՓՈՂՈՑ) Հ.21 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Նազանի Գրիգորյանի լ/ա Հասմիկ Մարտիրոսյանի դիմումը՝ Շորբուլաղ 1-ին փողոց (Էրեբունի, Մուշական 1-ին փողոց) հ.21 հասցեում գտնվող հողամասի սահմանները ճշտելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել 2020 թվականի փետրվարի 5-ի ՀՀ վարչական դատարանի ՎԴ/5324/05/19 վճիռը (օրինական ուժի մեջ է մտել 12.01.2022թ.):

Տեղագրական հանույթի համաձայն քննարկվող հասցեում գտնվող հողամասի մակերեսը կազմում է 1195.43քմ՝ փաստաթղթերում ամրագրված 1200.0քմ մակերեսի փոխարեն, որն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, գտնվում է ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 11-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 01.02.2024թ. տրամադրած հ.Ն/5486-24 եզրակացությունը և 28.03.2024թ. հ.Դ-40274-24 գրությունը.

1. Սահմանել, որ Շորբուլաղ 1-ին փողոց (Էրեբունի, Մուշական 1-ին փողոց) հ.21 հասցեում գտնվող (տնամերձ) 1195.43քմ հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2.Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա. Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ